

գլխին իննովկենտիոս Գ. Սրբղ. Պապին, որ անոյշ խօսքերով եւ Ս. Պետրոսի զբօշը զրկելով Լեւոնին՝ կը համոզէ յանձնել բերդը ասպետներուն, պայմանով որ Անտիֆաղինները իրենց իրրեւ բրինձ ընդունին Ռուբէնը:

Այսպէս ժամանակ մը նորէն Անտիֆաղին իշխաններուն ձեռքը կը մնայ բերդը. սակայն Լեւոն կրկին կը դրաւ՝ տեսնելով որ անոնք իրենց խոստումը չեն յարգեր. եւ մինչեւ 1268 թուականը կը մնայ Լեւոնի իշխանութեան տակ, մինչեւ Պիւստա իշխանին գալուստը: Վրայ կը հասնին թաթարները եւ բերդը ձեռքէ ձեռք

կ'անցնի ու շարունակական կռիւներէն քարուքանդ կ'ըլլայ եւ կը լքուի:

Մինչեւ վերջերս տակաւին դայն կը յիշէ Փրանսացի ճամբորդ մը եւ կը խօսի անոր աւերակներու մասին. կ'ըսէ թէ Կաստիմ կը գտնուի Պէյլանի մօտերը բլրան մը գաղաթին, եւ կը տեսնուին տակաւին անոր աւերակները, պարսպով եւ աշտարակներով. անոր ստորոտէն տակաւին կը հասնի ջինջ աղբիւր մը՝ ինչ որ կը փաստէ խաչակիրներու պատմիչին ըսածները²⁰:

Հ. Մ. ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

20. Սիսուան, էջ 427-429:

ՀԱՅԿ

Քաջագանգուր, պղնձեայ վառ սազաւարտով,
Ահա՛ կ'իջնես դարերու մեծ պատուանդանէն
Մեր սրտերու ահեղ կրկէսը հըրեղէն,
Արձակելու երեքթեւեան նետն՝ անվրդով:

Զի զխտապաստ երկրորդ անգամ պէտք է իյնայ
Բելը հսկայ, խաւարակուռ ոգին դաժան.
Լուսահեղեղ կապէ երկինքը ծխածան
Արմէններու վեհատեսիլ երկրին վըրայ:

Հայքը պէտք է վերըստեղծել եւ նորագոյն
Յաղթանակով պըսակել ցեղը մշտաբթուն.
Լարէ՛ աղեղը լայնալիճ, ո՛վ Նախահայր,

Եւ քանդակէ՛ յարուցեալի անունդ ոսկեայ
Արարատի վիշապածին կողին վըրայ,
Յաւերժական աստուածներու փառքին համար:

ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ

Երբ նորագարձ դարնանարոյր եղանակին
Լուսամուտները սենեակիդ բանաս ժպտուն,
Պիտի տեսնես պարտէզին մէջ արծաթ առուն,
Կապոյտ քօղով չքնաղ հարսի պէս նշենին:

Մեղրուճներու վըրայ թառիլ կու գայ մեղուն
Եւ հեշտարոյր քաղցրութիւնը փեթակին
Զիս կ'արբեցնէ ճամբորդիդ պէս, երբ անձկադին
Ես կ'ունենամ հմայքն աղուոր գիշերներուն:

Պիտի շնորհե՞ս ինձի քու տեսքդ ցանկալի,
Երբոր լեռան կատարին վրայ ձիւնը հալի,
Եւ եղնիկներ իջնեն ակերը հովիտին:

Պատուհանիդ առջեւ նուաղել ես պիտի դամ,
Քեզ կանչելու համար սիրոյս՝ կախարդական
Հովուերգութիւն մը քաղցրօրէն կարօտադին:

ՅՈՒՔ

Այս ճամբաներն ուրկէ անցար շատ առաջ,
Ե՛ս ալ կ'անցնիմ, ու ոտքերուդ հետքերէն՝
Հին երազի մ'ըստուերին մէջ կ'որոնեմ
Ուրախութեան անյոյս ծաղիկ մը թօչնած:

Ու ծառէ ծառ ոսկի շղթան արեւին
Զիս կը տանի չեմ գիտեր ո՛ւր, չեմ գիտեր.
Կեանքը այլեւս ո՛չ գիծ ունի, ո՛չ պատկեր.
Հոն միայն մութ մառախուղներ կ'երեւին:

Կը բաւէ որ փակեմ աչքերս եւ յիշեմ.
Ահա՛ կու գաս. ձայները քեզ կը կանչեն
Յարուցեալի գաղտնահանդէս ցնծութեան:

Ու կը սպասեմ այս ճամբուն ծայրը հասած,
Որ դուն բանաս իմ կարօտիս դուռը տան.
Ուր կը շողայ սուգի ձըրադ մը առկայծ...

ԱՐՄԵՆ ԵՐԿԱԹ